- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- Ծանուցել «Ասատրյանս» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու լրացուցիչ հիմնավորումներ, չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ
- Ծանուցել «Ասատրյանս» ՍՊԸ-ին ներկայացնելու տեղեկատվություն, որով կհիմնավորի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված հետևյալ կետերի առկայությունը ներդրված ծրագրում և նրանց պատշաճ կատարումը՝
- 1-ին կետի 2-րդ և 3-րդ պարբերություններ՝ մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
    - Վաճառքի և գնման պայմանագրերը:
    - Կանխիկի և փոխանցման վճարման կարգադրություններ:
    - Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝ Մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով՝ ըստ կուտակիչ հաշվի, ըստ գործընկերոջ, ըստ հաշիվ-ապրանքագրերի և ըստ պայմանագրերի